Embassy of the Czech Republic in Yerevan

TRANSITION
Transition Promotion Program

CZECH REPUBLIC
DEVELOPMENT COOPERATION

«NEW GENERATION» Humanitarian Non-Governmental Organization

«ԵՆՐ ՍԵՐՈՒՆԴ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

ԼԳԲՏԻՔ ԵԶՐՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԲԼՈԳԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երևան 2017

ԼԳԲՏԻՔ ԵԶՐՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԲԼՈԳԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Փորձագետ՝ Արման Ղարիբյան

Եզրութաբանական ձեռնարկը պատրաստվել է «Նոր սերունդ» մարդասիրական հասարակական կազմակերպության կողմից «ՔՀԿ-ներն ու ՁԼՄ-ներն առաջնագծում՝ Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց հանդեպ խտրականության վերացման նպատակով» ծրագրի շրջանակներում Հայաստանում Չեխիայի Հանրապետության դեսպանատան «Անցումային Առաջխաղացում» ծրագրի ֆինանսական աջակցությամբ:

Բովանդակություն

Անվանում	Էջ
Նախաբան	4
Գենդեր և սեռականություն. եզրույթների բացատրություններ Սեռ, Սեռականություն, սեռական կողմնորոշում և սեռական վարքագիծ	6
Գենդերային դեր և գենդերային ինքնություն	8
ԼԳԲՏԻՔ անձիք և նրանց հետ կապված ֆոբիաները (վախերը)	11
ԼԳԲՏԻՔ անձանց վերաբերյալ պատշաճ, անցանկալի և անթույլատրելի արտահայտությունների և եզրույթների ցանկ	12
Օգտագործված գրականության ցանկ	15

Նախաբան

«Նոր Սերունդ» մարդասիրական հասարակական կազմակերպության կողմից վերջին տարիներին իրականացված հետազոտությունները փաստում են, որ գեյ, լեսբի, բիսեքսուալ, տրանս*, ինտերսեքս և քվիր (ԼԳԲՏԻՔ) անձանց նկատմամբ խտրականության, ատելության խոսքի և ագրեսիայի դրսևորումները համատարած են առցանց հարթակներում: Հաճախ առցանց ագրեսիայի ալիքի առիթ է դառնում զանգվածային լրատվամիջոցներում (ԶԼՄ) հրապարակվող տեղեկատվությունը, որը ևս զերծ չի լինում ատելության խոսքից ու այլատյացության կոչերից: Երբեմն էլ լրատվամիջոցներում տպագրվող կամ հեռարձակվող տեքստերը պարունակում են ԼԳԲՏԻՔ անձանց համար վիրավորական, նվաստացնող և խտրական արտահայտություններ: ԶԼՄ հրապարակումներում ԼԳԲՏԻՔ համայնքի նկատմամբ բացասական տրամադրվածություն է ստեղծվում ոչ միայն տվյալ ԶԼՄ-ի՝ ԼԳԲՏԻՔ անձանց հանդեպ ունեցած վերաբերմունքի, այլև եզրույթների սխալ գործածության արդյունքում:

Ի թիվս լրագրողների համար հատուկ դասընթացներ կազմակերպելուն և «Բազմազանություն» ամենամյա լրագրողական մրցանակաբաշխությունն իրականացնելուն՝ «Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ-ն նախաձեռնել է այս եզրութաբանական (տերմինաբանական) ձեռնարկի ստեղծումը, որի նպատակը ևս Հայաստանում ԼԳԲՏԻՔ անձանց իրավունքների գրագետ լուսաբանումը խթանելն է:

Ձեռնարկը բաղկացած է սեռականության և գենդերային ինքնության վերաբերյալ բացատրական հատվածից, ինչպես նաև ԼԳԲՏԻՔ անձանց վերաբերյալ պատշաճ, անցանկալի և անթույլատրելի եզրույթների ցանկից:

Ձեռնարկը նախատեսված է գործող լրագրողների և բլոգերների համար, ովքեր հետաքրքրված են ԼԳԲՏԻՔ անձանց իրավունքների պրոֆեսիոնալ լուսաբանմամբ:

Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 3

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 29

Օրենքի առաջ բոլոր մարդիկ հավասար են և, առանց որևէ խտրության, օրենքի հավասար պաշպանության իրավունք ունեն:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 7

Գենդեր և սեռականություն. եզրույթների բացատրություններ

Սեռ, Սեռականություն, սեռական կողմնորոշում և սեռական վարքագիծ

Կենսաբանական սեռ՝ անձի կենսաբանական ստատուսն է, որը կանխորոշվում է օրգանիզմի վերարտադրողական համակարգով: Հենց այդ համակարգի կառուցվածքով ու ֆունկցիաներով էլ միմյանցից տարբերվում են արական, իգական կամ ինտերսեքս անհատները:

Սեռականություն՝ անձի կենսաբանական, սեռական և հոգեբանական հատկանիշների ամբողջությունն է, որով սահմանվում է մարդու ինքնությունը, սեռական և սոցիալական վարքագիծը, գենդերային դերը որպես հասարակության անդամ:

Սեռական ինքնություն՝ վերաբերում է անձի ներքին զգացողությանը՝ կապված իր սեռական կողմնորոշման հետ: Անձի սեռական ինքնությունը կարող է ինչպես համապատասխանել, այնպես էլ չհամապատասխանել սեռական կողմնորոշման հետ: Այն տարբեր է անձի գենդերային ինքնությունից:

Սեռական կողմնորոշում՝ բնորոշվում է հուզական, զգայական, զգացմունքային և սեքսուալ գրավչությամբ որոշակի գենդերի անձանց նկատմամբ: Պայմանավորված նրանով, թե անձն ում հանդեպ ունի զգացմունքային և սեքսուալ գրավչություն, առանձնացնում են սեռական կողմնորոշման մի շարք տեսակներ, որոնք ներկայացված են ստորև:

Տարասեռական (հետերոսեքսուալ) կողմնորոշում՝ ունի այն անհատը, ով հուզական, զգայական, զգացմունքային և սեքսուալ գրավչություն ունի այլ գենդերի անձանց նկատմամբ: Այսպիսի անձանց անվանում են տարասեռական կամ հետերոսեքսուալ:

Նույնասեռական (հոմոսեքսուալ) կողմնորոշում՝ ունի այն անհատը, ով հուզական, զգայական, զգացմունքային և սեքսուալ գրավչություն ունի նույն գենդերի անձանց նկատմամբ: Այսպիսի անձանց անվանում են նույնասեռական կամ հոմոսեքսուալ:

Երկսեռական (բիսեքսուալ) կողմնորոշում՝ ունի այն անհատը, ով հուզական, զգայական, զգացմունքային և սեքսուալ գրավչություն ունի ինչպես իր, այդպես էլ այլ գենդերի անձանց նկատմամբ: Այսպիսի անձանց անվանում են երկսեռական կամ բիսեքսուալ:

Անսեռական (ասեքսուալ) կողմնորոշում՝ ունի այն անհատը, ով սեքսուալ գրավչություն չունի որևէ գենդերի նկատմամբ: Այսպիսի անձանց անվանում են անսեռական կամ ասեքսուալ: Մասնագետների մի մասը անսեռականությունը համարում է սեռական կողմնորոշման բացակայություն, մյուս մասն էլ այն դիտարկում է որպես կողմնորոշման առանձին տեսակ:

Պանսեքսուալ կողմնորոշում՝ ունի այն անհատը, ով սեքսուալ և ռոմանտիկ գրավչություն ունի ցանկացած անձի նկատմամբ՝ անկախ վերջինիս կենսաբանական սեռից և գենդերային ինքնությունից: Այսպիսի անձանց անվանում են պանսեքսուալ:

Պոլիսեքսուալ կողմնորոշում՝ ունի այն անձը, ով գրավչություն ունի երկու կամ ավելի, սակայն ոչ ցանկացած գենդերային ինքնություն ունեցող անձանց նկատմամբ՝ ինչպես պանսեքսուալը և ոչ երկբևեռ՝ ինչպես երկսեռականը (բիսեքսուալը): Օրինակ, պոլիսեքսուալ անձը կարող է գրավչություն ունենալ սիսգենդեր/ցիսգենդեր կնոջ (տես՝ էջ 8), բիգենդեր անձի և տրանսգենդեր կնոջ նկատմամբ, բայց ոչ սիսգենդեր/ցիսգենդեր տղամարդու:

Սեռական վարքագիծ՝ անձի կատարած սեռական բնույթի գործողություններն են, դրսևորած սեռական վարքն ու կենսակերպը՝ ցանկացած անձի կամ ինքն իր նկատմամբ (ձեռնաշարժություն): Ի տարբերություն սեռական կողմնորոշման, սեռական վարքագիծը միայն սեռական բնույթի գործողություններ են՝ առանց հուզական, զգայական, զգացմունքային գրավչությամբ:

ԿՍԿ՝ հապավում է, որով կարճ անվանում են կնոջ հետ սեռական հարաբերություն ունեցող կնոջը: ԿՍԿ հապավումը գործածվում է, երբ խոսքը գնում է անձի սեռական վարքագծի, այլ ոչ կողմնորոշման մասին: ԿՍԿ-ն միշտ չէ, որ ունի հոմոսեքսուալ կամ բիսեքսուալ կողմնորոշում:

SUS՝ հապավում է, որով կարճ անվանում են տղամարդու հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդուն: SUS հապավումը գործածվում է, երբ խոսքը գնում է անձի սեռական վարքագծի, այլ ոչ կողմնորոշման մասին: SUS-ն միշտ չէ, որ ունի հոմոսեքսուալ կամ բիսեքսուալ կողմնորոշում:

Գենդերային դեր և գենդերային ինքնություն

Գենդերը բնութագրիչ է, որով հասարակությունը սահմանում է առնականությունն ու կանացիությունը: Այն առնականության և կանացիության սոցիալապես ամրագրված վարքագծի դրսևորում է, որը հաճախ պայմանավորված է լինում հասարակական ակնկալիքներով:

Գենդերային դեր՝ սոցիալական նորմերի ամբողջականություն է, որը թելադրում է կենսաբանական սեռով պայմանավորված կնոջ և տղամարդու համար այնպիսի վարքագիծ, արտաքին տեքստ և կենսակերպ, որն ընդունելի ու ցանկալի է մեծամասնության համար:

Գենդերային արտահայտում՝ անձի արտաքին տեսքի, վարվելակերպի, խոսելաձևի միջոցով գենդերային ինքնության արտահայտումն է: Այն միշտ չէ, որ համապատասխանում է կնոջ և տղամարդու իդեալականացված գենդերային նորմերին և հասարակական ակնկալիքներին:

Գենդերային ինքնություն՝ անհատի կողմից իր իսկ գենդերի ընկալումն ու ճանաչումն է: Գենդերային ինքնությունը սոցիալական է և կարող է տարբերվել կամ համընկնել անձի կենսաբանական սեռի հետ: Օրինակ, կենսաբանական տղամարդը կարող է ինքն իրեն ընկալել թե՛ որպես կին, թե՛ որպես տղամարդ:
Ստորև ներկայացվում են գենդերային ինքնության որոշ օրինակներ.

Սիսգենդեր կամ ցիսգենդեր՝ այն անհատն է, ում գենդերային ինքնությունը համապատասխանում է իր կենսաբանական սեռին:

Տրանսգենդեր՝ այն անձն է, ում գենդերային ինքնությունը և/կամ գենդերային ինքնաարտահայտումը տարբերվում է իր կենսաբանական սեռից:

Տրանսսեքսուալ՝ այն անձն է, ով ունի հստակ գենդերային ինքնություն և դեր, որոնք հակառակ են իր կենսաբանական սեռին: Տրանսսեքսուալը սովորաբար իրեն հաստատված է համարում իր գենդերային դերում և ցանկանում է այն պահպանել մշտապես: Օրինակ, կենսաբանական սեռով պայմանավորված կինը կարող է իրեն զգալ տղամարդ և ցանկություն ունենալ մշտապես հանդես գալ տղամարդու դերում: Տրանսսեքսուալները հաճախ դիմում են բժշկական միջամտությունների՝ իրենց մարմինն իրենց ցանկալի սեռի մարմնին համապատասխանեցնելու համար:

Քրոսս դրեսսեր (հագուստափոխ)՝ այն անձն է, ով ոչ մշտապես կրում է այլ գենդերին հատուկ հագուստ: Օրինակ, կենսաբանական սեռով պայմանավորված տղամարդը կարող է ամեն երեկո կերպարանափոխվել կնոջ՝ կրելով կանանց հատուկ հագուստ և այլ ատրիբուտներ:

Ինտերսեքս՝ եզրույթով բնութագրում են այն անձանց, ովքեր կենսաբանորեն տարբերվում են արական և իգական սեռերի ընդունված չափանիշներից, ունեն ֆիզիոլոգիական առանձնահատկություններ, որոնք կարելի է տեղավորել արականի ու իգականի միջև կամ համարել այդ երկուսի զուգակցումը:

Բիգենդեր՝ այն անձն է, ով միաժամանակ արտահայտում է երկու գենդերային ինքնություն՝ իգական ու արական: Բիգենդեր անձիք իրենց նույնականացնում են և՛ տղամարդու, և՛ կնոջ հետ: Որոշ բիգենդեր անձիք միաժամանակ են արտահայտում իրենց երկու գենդերները, մյուսների մոտ գենդերային արտահայտումը կախված է իրենց ցանկությունից, տրամադրությունից, շրջապատից և սոցիալական ու մշակութային համատեքստերից:

Ագենդեր՝ այն անձն է, ում գենդերային ինքնությունը գենդերի բացակայությունն է, գենդեր չունենալն է: Ագենդեր անձանց երբեմն նաև անվանում են գենդեր-քուիր, ոչ երկբևեռ (non-binary) կամ չեզոք գենդեր ունեցող անձինք:

Քուիր՝ այն անձն է, ում գենդերային ինքնությունն ու վարքագիծը հնարավոր չէ դասակարգել որևէ խմբի ներքո: Քուիր անձը որևէ կերպ չի սահմանում իր ինքնությունն ու սեռականությունը, դեմ է սոցիալական նորմերին և հետերոնորմատիվությանը:

Գենդեր-ֆլուիդ՝ «լողացող» կամ «հեղուկ» գենդերային ինքնություն է, որը փոփոխվում է կախված սոցիալական և մշակութային համատեքստից: Գենդեր-ֆլուիդ անձը դժվարանում է իրեն մշտապես նույնականացնել որևէ գենդերի հետ:

Դրագ-քուին՝ արտիստ է, ով բեմում հանդես է գալիս հակառակ սեռի հագուստով: Դրագ-քուինը պարտադիր չէ, որ նույնասեռական կամ հագուստափոխ լինի:

ԼԳԲՏԻՔ անձիք և նրանց հետ կապված ֆոբիաները (վախերը)

ԼԳԲՏԻՔ հապավում է, որով կարճ անվանում են լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանս*, ինտերսեքս և քուիր անձանց: Հայաստանյան մամուլում առավել հաճախ հանդիպում են ԼԳԲՏ, ԼԳԲՏ+ կամ ԼԳԲՏԻ հապավումները:

Լեսբի՝ նույնասեռական կինն է, ով հուզական, զգայական, զգացմունքային և սեքսուալ գրավչություն ունի կանանց նկատմամբ:

Գեյ՝ նույնասեռական տղամարդն է, ով հուզական, զգայական, զգացմունքային և սեքսուալ գրավչություն ունի տղամարդկանց նկատմամբ:

Տրանս*՝ եզրույթը գործածվում է որպես հավաքական անվանում տրանսգենդեր, տրանսսեքսուալ և հագուստափոխ անձանց համար:

Հետերոնորմատիվություն՝ սոցիալական և մշակութային ընդունված չափանիշներն են, համաձայն որոնց՝ հետերոսեքսուալությունը միակ ընդունելի սեռական կողմնորոշումն է:

Հոմոֆոբիա՝ վախ, որը հիմնականում դրսևորվում է ագրեսիայի, անհանդուրժողականության և ատելության տեսքով՝ ուղղված նույնասեռականության և/կամ նույնասեռական անձանց նկատմամբ:

Բիֆոբիա՝ վախ, որը հիմնականում դրսևորվում է ագրեսիայի, անհանդուրժողականության և ատելության տեսքով՝ ուղղված երկսեռականության և/կամ երկսեռական անձանց նկատմամբ:

Տրանսֆոբիա՝ վախ, որը հիմնականում դրսևորվում է ագրեսիայի, անհանդուրժողականության և ատելության տեսքով՝ ուղղված տրանսգենդեր, տրանսսեքսուալ և հագուստափոխ անձանց նկատմամբ:

Սեքսիզմ՝ սեռի պատկանելության հիմքով խտրականության գաղափարախոսություն և պրակտիկա է, որն արտահայտվում է այս կամ այն սեռի նվաստացման, վիրավորանքի կամ ծաղրանքի միջոցով: Սեքսիզմը հաճախ դրսևորվում է գիտակցված կամ չգիտակցված քարոզչության տեսքով, որը հիմնված է սեռերից որևէ մեկի ֆիզիկական կամ ինտելեկտուալ որակների գերագնահատման կամ թերագնահատման վրա:

ԼԳԲՏԻՔ անձանց վերաբերյալ պատշաճ, անցանկալի և անթույլատրելի արտահայտությունների և եզրույթների ցանկ

- «Պատշաճ» արտահայտություններն ու եզրույթների գործածումը խրախուսվում է, քանի որ դրանք իրավական և գիտական առումով ճիշտ են և ստեղծում են առողջ միջավայր ԼԳԲՏԻՔ անձանց խնդիրները քննարկելիս:

- «Անցանկալի» արտահայտություններն ու եզրույթները հաճախ չեն վիրավորում ԼԳԲՏԻՔ անձանց արժանապատվությունը, սակայն կարող են շփոթություն առաջացնել կամ ասոցացվել բացասական երևույթների հետ՝ ակամայից հանրությունում առաջացնելով բացասական տրամադրվածություն ԼԳԲՏԻՔ անձանց նկատմամբ: Այս արտահայտությունների գործածությունը չի խրախուսվում:

- «Անթույլատրելի» արտահայտություններն ու եզրույթները ոչ միայն խտրական են, վիրավորում ու նվաստացնում են ԼԳԲՏԻՔ անձանց արժանապատվությունը, այլև հոմոֆոբիա և այլատյացություն են սերմանում հասարակությունում, որոնք կարող են հանգեցնել կոնկրետ գործողությունների՝ ընդհուպ մինչև ԼԳԲՏԻՔ անձանց կյանքի ու առողջության դեմ ուղղված հանցագործությունների:

Պատշաճ	**Անցանկալի**	**Անթույլատրելի**[1]
Սեռական կողմնորոշում	սեռական նախընտրություն[9]	սեռական շեղվածություն այլասերվածություն
Նույնասեռականություն	ոչ ավանդական սեռական կողմնորոշում	հոգեկան հիվանդություն
Նույնասեռական Հոմոսեքսուալ	միասեռական[2] հոմոսեքսուալիստ[3]	այլասերված համասեռամոլ[4]
Գեյ	գեյ տղամարդ[5]	գոմիկ արմավոլ[6] իգացող պիդառաստ, պիդռ ղզիկ երկնագույն գյոթ

Պատշաճ	Անցանկալի	Անթույլատրելի[1]
Լեսբի	լեսբուհի[7]	իգամոլ[8] ղզողլան
Բիսեքսուալ Բի[10] Երկսեռական		չկողմնորոշված
Ինտերսեքս	հերմոֆրոդիտ[11]	երրորդ սեռ[12] ղզողլան
Հետերոսեքսուալ Տարասեռական		նորմալ կողմնորոշում[13]
Տրանս անձիք	նույնասեռական, գեյ[14]	Իգացող պիդառաստ, պիդռ ղզիկ

1. Անթույլատրելի արտահայտությունների ու եզրույթների օրինակները վերցված են արդի հայ մամուլում և սոցիալական ցանցերում հանդիպող հրապարակումներում:
2. Միասեռական (սեռերից միայն մեկի նկատմամբ գրավչություն ունեցող) ըստ էության կարող են համարվել և՛ նույնասեռականները, և՛ տարասեռականները, քանի որ երկուսի դեպքում էլ անհատները գերադասում են սեռական և հուզական հարաբերություններ ունենալ բացարձակապես մեկ սեռի հետ (կին կամ տղամարդ):
3. «Հոմոսեքսուալիստ» եզրույթը նախկինում ուներ բժշկական նշանակություն: Այդպես էին որակել «հոմոսեքսուալիզմ» հիվանդություն ունեցող անձանց: Թեև Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը ևս 1990թ. մայիսի 17-ին հեռացրել է «հոմոսեքսուալիստ» ախտորոշումը Հիվանդությունների միջազգային դասակարգման հոգեկան խանգարումների շարքից, այնուամենայնիվ, այդ արտահայտությունը բազմիցս կիրառվել է

նույնասեռականության դեմ ակտիվորեն պայքարող խմբերի կողմից՝ որպես նվաստացուցիչ բառ:

4. «Մոլ» բառարմատը, որն ընկած է նաև մոլուցք բառի հիմքում, բացասական է ընկալվում: Մի շարք բացասական երևույթներ նկարագրվում են բարդ բառերով, որոնց վերջին արմատը հենց մոլն է, օրինակ՝ թմրամոլ, խաղամոլ, գինեմոլ:
5. «Գեյ» արտահայտությունը թեև նախկինում կիրառվել է նույնասեռական տղամարդու և կնոջ վերաբերյալ, վերջին տարիներին միայն տղամարդ նույնասեռականներին են անվանում «գեյ», իսկ կին նույնասեռականներին՝ «լեսբի», ուստի «գեյ» ասելով արդեն իսկ տղամարդ ենք հասկանում, կարիք չկա գրելու/ասելու «գեյ տղամարդ»:
6. Տե՛ս 4-րդ կետը:
7. «Լեսբի» ասելով հասկանում ենք նույնասեռական կին: Այս եզրույթը բացառապես կանանց է վերաբերում, ուստի դրան «-ուհի» վերջացանց ավելացնելու կարիք չկա:
8. Տե՛ս 4-րդ կետը:
9. «Նախընտրություն» արտահայտությունը ընդգծում է, որ նույնասեռականությունը տվյալ անհատի ընտրությունն է, այնինչ սեռական կողմնորոշումը չի կառավարվում անհատի կողմից:
10. «Բի»ն բիսեքսուալի կրճատ տարբերակն է:
11. «Հերմոֆրոդիտը» հնացած եզրույթ է:
12. Սեռերի թվային դասակարգումը նրանց մեջ աստիճանավորում և հիերարխիա է ստեղծում
13. Որևէ սեռական կողմնորոշում «նորմալ» որակելը ինքստինքյան մյուս կողմնորոշումները դիտարկում է որպես «աննորմալ»:
14. Տրանս անձիք առանձին խումբ են կազմում, և չի կարելի շփոթել կամ ներկայացնել նրանց գեյ կամ նույնասեռական եզրույթի ներքո:

Օգտագործված գրականության ցանկ

- An Ally’s Guide to Terminology, Movement Advancement Project
- Guidelines on LGBT reporting, National Union of Journalists
- LGBTQI Terminology, LGBT Resource Center at UC Riverside
- Media Style Guide, Trans Media Watch
- Media Reference Guide, Glaad
- ԼԳԲՏ անձանց հետ աշխատանքի ուղեցույց, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» «NEW GENERATION»
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ HUMANITARIAN NGO
Էլ-հասցե: newgenerationngo@gmail.com | http://ngngo.net/